ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIK OF ARMENIA
ARMAVIR MARZ
MIASNIKYAN MUNICIPALITY

Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Փող. Մյասնիկյան
Հեռ. (0233) 74-6-73

Armavir marz Miasnikyan village
Str. Miasnikyan
Tel. (0233) 74-6-73

Թիվ 097

06.09. 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի ղեկավարի արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:
Առդիր 11 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ... ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք N 8647-11
07 09 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 4 „02„մայիսի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԶԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և 32-րդ հոդվածի 17-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2011թվականի մայիսի 2-ից վերսկսել ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը և այն հայտարարել բացված:
2. Հանձնարարել մանկապարտեզի տնօրենին(Ռ.Մանուկյանին) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թ-ի մայիսի 02 ,թիվ 04 որոշում
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 5 „02„մայիսի 2011թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 01-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 03 Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով , 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի „բ„ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մազպետի 2010 թ-ի մարտի 22-ի թիվ 01/07.2/298-10 և 2011թ-ի ապրիլի 15-ի թիվ 01/07/1162-11 գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի 2009թվականի փետրվարի 18-ի <<ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N-1 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N-1, N-2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի <<Համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին>> 2010 թվականի ապրիլի 19-ի N 3 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Պետրոսյան

2011 թ-ի մայիսի 02 ,թիվ 05 որոշում
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 6 „18„ հուլիսի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով,հիմք ընդունելով Մյասնիկյան համայնքի ավագանու համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական շենքից 95,14 քառ.մ վարձակալական հիմունքներով , հինգ տարի ժամանակով հատկացնել <<ՖԻՆՔԱ>> ՈՒնիվերսալ վարկային գործունեություն ծավալելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Պետրոսյան

2011 թ-ի հուլիսի 18 ,թիվ 06 որոշում
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 7 „25„հուլիսի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԱՔՍ>> ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 65-րդ հոդվածի առաջին կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու թիվ 10 նիստի 05 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի << Արաքս >> երկաթուղային կայարանի զբաղեցրած 10,3 հա տարածքը վերականգնել որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ա.Պետրոսյան

2011 թվականի հուլիսի 25
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

31.03.2011 **ԹԻՎ 04**

ՄՈՒՐԱԴ ԲՐՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Լուծել Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի աշխատակազմի օժանդակ բանվոր՝ Մուրադ Բրոյանի աշխատանքային պայմանագիրը:
2.Գլխավոր մասնագետին՝ (Լ.Սմբատյանին) սահմանված կարգով իրականացնել վերջնահաշվարկի վճարումը:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի մարտի 31,
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01.04.2011 **ԹԻՎ 05**

ԱՐՄԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ա.Ավետիսյանի 2011 թվականի մարտի 31-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2011թվականի ապրիլի 1-ից Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի աշխատակազմի տեխնիկական աշխատող՝ Արմանուշ Ավետիսյանին 2010-2011թթ-ի համար տրամադրել ամենամյա արձակուրդ 20 աշխատանքային օր ժամանակով:
2.Ա.Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի մայիսի 3-ին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Կ.Տ. Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի ապրիլի 01,
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01.05.2011 ԹԻՎ 06

ՌԶԱ ԿԱԼՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ռ.Կալոյանի 2011 թվականի ապրիլի 30-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2011թվականի մայիսի 1-ից Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի աշխատակազմի վարորդ՝ Ռզա Կալոյանին 2010-2011թթ-ի համար տրամադրել ամենամյա վճարովի արձակուրդ՝ 20 աշխատանքային օր ժամանակով:

2.Ռ.Կալոյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի մայիսի 31-ին:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի մայիսի 1,
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

10.06.2011 **ԹԻՎ 07**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 2011 թվականի հունիսի 5-ին Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում տեղացած կարկտի և պտտահողմի հետևանքով գյուղացիական տնտեսություններում մշակվող բուսատեսակներին պատճառած վնասի հաշվառման աշխատանքներ իրականացնելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
   Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Բաղդասարյան(համ.ղեկ.տեղակալ)
   Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Վարդանյան(գյուղ. գծով առաջ.մասնագետ)
   Ս.Արտաշյան (առաջատար մասնագետ)
   Վ.Հովհաննիսյան(ավագանու անդամ)
   Ա.Մարգսյան (ավագանու անդամ)
2. Հանձնարարել հանձնաժողովին՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել երկօրյա ժամկետում և արդյունքների մասին հայտնել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի հունիսի 10,
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01.07.2011 **ԹԻՎ 08**

ՀԱԿՈԲ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հ.Բաղդասարյանի 2011 թվականի հունիսի 30-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հակոբ Գնորգի. Բաղդասարյանին 2010-2011թթ համար տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 24 աշխատանքային օր(20 օր աշխատանքային 4 օր լրացուցիչ):
2.Հ.Բաղդասարյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի օգոստոսի 5-ին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի մայիսի 01,
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

08.08.2011 ԹԻՎ 09

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Լ.Սարգսյանի 2011 թվականի օգոստոսի 7-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Լիլիթ Սարգսյանին տրամադրել երեխայի խնամքի արձակուրդ՝ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը:
2.Լ.Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2013 թվականի մայիսի 8-ին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Կ.Թ. Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի օգոստոսի 8
գ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

09.08.2011 ԹԻՎ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման >> 2011 թ-ի հիմնական միջոցառումների պլանի 4.2,5 կետի, 2011թ-ի օգոստոսի 18-ին անցկացվելիք <<Տարահանվող բնակչության ընդունման կազմակերպումը և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը>> թեմայով շտաբային ուսումնավարժական նախապատրաստման և անցկացման կապակցությամբ.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2011 թվականի օգոստոսի 18-ին Արմավիրի մարզի Մյասնիկյան համյանքի ղեկավարի աշխատակազմում անցկացնել շտաբային ուսումնավարժություն << Տարահանվող բնակչության ընդունման կազմակերպումը և առաջին միջոցներով ապահովումը >>թեմայով:
2.Ուսումնավարժության ղեկավար նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Բաղդասարյանին:
3. Ուսումնավարժության ղեկավարին՝ մինչև հուլիսի 28-ը մշակել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման , անցկացման փաստաթղթերը և զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելուն մասին:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահ

Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2011 թվականի օգոստոսի 9
գ.Մյասնիկյան